№ 42 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1894 № 42

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան։ Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ, կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակները և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են դրուիլ Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում՝ Յովհաննէս ապրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակովբ Էլչիբեկեանի մօտ, Նոր-Զուղայում՝ Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանցի մօտ, Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Պարսկահայերս ինչ աչքով ենք նայում կրթական գործի վերայ. Նամակ Ռաշտից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—Բանասիրական Թեմական տեսուչ Ստրպատեանում.—Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐՍ ԻՆՉ ԱՉՔՈՎ ԵՆՔ ՆԱՅՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱՑ

—

Մարդկութիւնը յեղափոխող, կրթող, զարգացնող, շարժող, հին փթած,—կաշկանդող նախապաշարումներից նորից ծնուցանող, մեռելային անշարժութիւնից և սխոլաստիկական դրութիւնից ազատող առաջին և գլխաւոր դարերից մինը եղել է դաստիարակութիւնը. այդ հանրօգուտ գործը սկսուել է նորա մանուկ սերնդից, մատաղ ոստերից՝ պատուաստելով նորա վերայ գրագիտութեան հետ բարի, ազնիւ և գեղեցկի սերմերը,-գաղափարները, որ թէպէտ մանուկը ծնուած լինելով անկիրթ, կիսավայրենի, նախապաշարուած ժողովրդի մէջ, սկզբում խորթ է թուացել նորան, բայց հետզհետէ իւրացրել, սեպհականացրել է այդ վսեմ գաղափարները, նոյնը շարունակ սովորեցնելով յետագայ սերունդներին՝ առաջ է մղուել, կոխոտել խորտակել այն ամենը, որ իւր նախորդներից առանց փաստի աւանդուել է իրան. չը մոռանանք ասել, ընտրելով նրանցից միայն լաւագոյնները։

Ազգերի քաղաքակրթութեան, վերածնութեան պատմութեան մէջ գտնում ենք, դաստիարակութիւնը կատարել է այն դերը՝ անընդհատ մղելով նորանց դէպի առաջ, ստեղծելով նորանց մէջ մրցում, կեանք, եռանդ, ոգևորութիւն և նախանձաւորութիւն, ինչ որ ղծակը ամենաբարդ մեքենայի մէջ առանց որի՝ մեքենան կը մնար անշարժ. եթէ մինչև անգամ դորա բոլոր պարագայքը կազմ ու պատրաստ լինէին։ Չէ որ մարդու ամբողջ օրգանիզմը անշարժութեան է մատնուում, դադարում է գործունէութիւնից, երբ որ ի բաց է առնուում նորան կենդանացնող մասը շարժիչ լծակը՝ շունչը, հոգին։

Ազգերի կեանքը, գոյութիւնը, ոյժը, առաջադիմութիւնը, քաղաքական բարձր դիրքը նոյնպէս շատ կախումն ունի դաստիարակութիւնից։ Մենք յառաջ կը բերենք բազմաթիւ օրինակներից Չին—Ճապոնական ազգերի պատերազմը, որը քաղաքական աշխարհի միտքը ահա քանի մի ամիսներ զբաղեցրել է. 50 տարիներ առաջ Ճապոնիան դեռ գտնուում էր իւր պապերի հնաւանդ սովորութիւնների՝ վարք ու բարքի, նիստ ու կացի նեղ, սահմանափակ շրջանակի մէջ. Ճապոնական բանասիրական

ծեռնադրել, որովհետեւ նա քիչ ու շատ կարդալ գիտէ կամ լաւ ժամերգակ է: Մենք չենք ուզում զբաղուել անձնաւորութիւններով, մեզ համար նշանակութիւն ունի անձնաւորութեան ներքին աշխարհը.-թէ ինչ սկզբունքների դեր է նա. ունի արդեօք տեսչական պաշտօնի համար անհրաժեշտ պատրաստութիւններ, մանկավարժական բազմակողմանի թէօրիական եւ պրաքտիքական հմտութիւն, որ կարողանայ իրան յանձնուած դպրոցները ղեկավարել գիտութեան ծեռք բերած վերջին մէթոդներով:

Դեռ բաւական չէ այս ու այն լրագրում մի քանի յօդուածներ գրել թերթի օգնական խմբագրի պաշտօն կատարել եւ այլն. տեսչական պաշտօնը մի այնպիսի ծանրակշիռ նշանակութիւն ունի մեզ համար, որ այդ եւ այդպիսի գործունէութիւնները նսեմանում են մեր աչքում: Ինչ է նշանակում առանց պահանջեալ որոշ, անհրաժեշտ հոգեւորականի բարեսրտութիւնից բխած յանձնարարական նամակի եւ բրռնաղբօսիկ կերպով ծեռք բերած ստորագրութիւնների վերայ, վերցնել մի բոլորովին անծանօթ մէկին, (մանկավարժական ասպարիզում) եւ թեմական տեսուչ ճոճոան տիտղոս տալով նրան տեսուչ նշանակել:

Այն պարոնները, որոնք իրանց ստորագրութիւններով խնդրել են իբր թէ որ այդ պարոնը տեսուչ նշանանակուի, արդեօք, ինչ խելքի եւ ղարգացման տեր մարդիկ են.—բոլորովին հասարակ գիւղացիներ, որոնք դպրոցի մասին այնքան գաղափար ունին, որքան ունի մի հնակարկատ, կղերական կոչման մասին: Իրերի այսպիսի դրութիւնը խլում է

նրան իւր գոյութեամբ լուսաւորեալ աշխարհին յայտնի էր նրանով միայն, բայց հետզհետէ մօտենալով Եւրոպային շըփուելով նորա հետ, պատռեց իւր աւանդական թանձր վարագոյրը, դուրս եկաւ իւր սահմանափակ նեղ վիճակից մի կողմ ձգելով հեթանոսական կաշկանդող, նախապաշարմունքը, պատուաստեց իւր սերունդը լուսաւորեալ աշխարհի քաղաքակրթութիւնով, շնորհիւ տասնեակ տարիների մտաւոր անխոնջ աշխատութեան, իրական, շօշափելի ճշմարիտ դաստիարակութեան, այսօր պատերազմի դաշտում խրախտում է իրանից 12 անգամ բազմաթիւ չինացւոց դէմ, որ շատ հաւանական է վերջնականապէս յաղթանակը տանէ էլ։

Մեր նախահայրերը պակաս նշանակութիւն չեն տուել դաստիարակութեանը, գիտենալով որ մի ազգի գոյութեան հիմնաքարերից մէկ էլ դա է. դեռ 5-երորդ դարում ընտրեցին ուշիմ երիտասարդներ. ուղարկեցին օտար աշխարհ՝ Բիւզանդեայ, Աթէնք, Աղէքսանդրիայ որոնք ժամանակից գիտութիւններով զինւորուած փայլեցան՝ շունչ, կեանք, հոգի ներշնչելով ժողովրդին, սոյն շաւղով է յառաջադիմում Կովկասը մեր սահմանակից հարևան երկիրը։

Իսկ մենք՝ պարսկահայերս ինչ աչքով ենք նայում դաստիարակչական գործի վերայ, և կամ ինչ դեր է խաղում կրթութիւնը մեր կեանքի մէջ։ „Շաւիղ„ ընթերցողներից շատերը գուցէ կասեն մեզանում հասարակական կեանք չկայ, այդ է պատճառը որ սառնասրտութեամբ ենք վերաբերւում կրթական գործին, (ինչպէս շատերից լսել եմ)։

Մեր պատասխանը այդպիսիներին այս է միթէ հասարակական կեանք ստեղծողը, կամ առ նուազն եղածը հովանաւորողը դուք չէ՞ք, այսօր կան մի քանի կազմակերպուած ընկերութիւններ, որոնք իրանց նպատակ են ընտրել Պարսկաստանի հայ ժողովրդի կրթական գործին նպաստել, նորան կանոնաւոր ընթացք տալով, այսօր նորանք՝ այդ ընկերութիւնները սևեռեալ աչքերով նայում են ձեզ՝ սպասում են ձեզանից բարոյական ձեռնտուութիւն նիւթական օժանդակութիւն. պարտքդ կատարել ես, իսկ եթէ ոչ, ինչ փաստերով ես արդարանալու. այդ ընկերութիւններից առաջինը „Սէր“ ընկերութիւնը կարելի է առաջինը համարել, (մնացեալները անունով են) որ իւր գոյութեան ամենաւոգեւորեալ առաջին շրջանում յանդգնութիւն ունեցաւ երկու տարի շարունակ Սալմաստ գաւառի Մահլամ գիւղում մի ուսուցիչ պահելու ամենանեղ միջոցներով, իսկ այդ ընկերութիւնն էլ այժմ սնանկութեան ենթարկուած, քայքայման վրայ է, որովհետև անդամները չեն բարեհաճում վճարը հատուցանել, և ունեւոր հասարակութիւնը սառնասրտութեամբ է վերաբերւում դէպի այդ ընկերութիւնը, նպաստամատոյց չի լինում, ինչու. որովհետև ընկերութեան հիմնադիրը մի հասարակ տիւլդարի որդի է, և սորա նախաձեռնութիւնը դիպչում է նորանց ինքնասիրութեանը։

Ատրպատականի հարիւրաւոր գիւղերը ուսուցիչներ են խնդրում Դավրէժից, մինչդեռ Արամեան դպրանոցի ընթերցաւարտներն երես թեքելով խոյս են տալիս, ապագայում հարուստ վաճառական դառնալու երազով, ասպարէզը թողնելով օտարներին իսկ տասնեակ բաղդախնդիր տաճկահայ անկոչ սիրացուներ գիւղական ուսուցչի վեհ պաշտօնը սիրով յանձն են առնում, որոնք ոչ միայն ծանօթ չեն մանկավարժական սկզբունքներին, այլ մինչև անգամ զուրկ են ամենատարրական կրթութիւնից. դորանց տէր Թօդիկեան ուղղութիւնը, ես կարծում եմ, ապագայում շատ ծանր հետևանք է ունենալու պարսկահայերի կեանքում։

Սորանից երկու տարի առաջ Դավրէժում բացուելի կենդրոնական դպրոցի հարցը բարձրացաւ, որը մի քանի շաբաթ ժողովների, տաք վիճաբանութիւնների առարկայ դարձաւ, ժողովներում լոկ խօսքով օդային ամրոցներ էր կառուցանում, և մինչև անգամ մասնաժողով ընտրուեցաւ հարցը քննելու, մշակելու դիտաւորութեամբ ո՞ւր մնաց այդ կարեւոր հարցը, հարց, որ մահու և կեանքի չափ կարեւորութիւն ունի պարսկահայերի համար. հարցը յոգնած էր, գնաց հանգստանալու, իսկ պարսկահայը թող պարծենայ իւր բողէական ոգևորութեամբ

Մինչև այժմ գանգատւում, պոռում էինք, թէ մեզանում մամուլ չըկայ, որ մեր հասարակական, ուսումնարանական գործերին ուղղութիւն տայ՝ հարցը մըշակի, ղեկավարի առանց երկարաբանութեան խնդրում ենք, ձեռքներդ խիղճերի վրայ դընելով ինքներդ դատեցէք ինչպէս էք վերաբերւում դէպի տպագրական սուրբ խօսքը՝ համակրութեամբ թէ հակադրութեամբ,

Վերջապէս, ուշադիր եղէք, ազգերը ահագին կարաւաններով դիմում են դէպի կրթութեան, լուսաւորութեան սահմանները, պարսկահայերս ինչ ենք անում, ինչ աչքով ենք նայում կրթութեան վերայ։

Ա.

մեզանից իրաւունքը պ. Տեսչից գործունէութիւն պահանջելու: Այդպիսի անտակտ, անխոհեմ եւ անսկզբունք քայլերի հետեւանքն այն է լինում, որ Սալմաստի գիւղերը լցւում են մութ անկիւններից բախտահալած ուսուցիչներով եւ քահանաներով. որոնք ինչպէս, իրանք իրանցից ներկայացնում են ժողովրդական ցեցեր, նրա արիւնը ծծող տզրուկներ: Եթէ Տեսուչն ինքը գաղափար չունի մանկավարժութեան մասին,—թէեւ մի ժամանակ հարուստ, իսկ այժմ սնանկացեալ մի թերթում երբեմն գրել է ինքն էլ, գիտութեան հետ առել է փոքր ինչ,—դըժուար չէ հասկանալ, թէ ինչ քաոս կը ներկայացնէին այն դպրոցների բուն ուսումնական—բարոյական սկզբունքները, որոնք կը ղեկավարուէին նրա անփորձ, անհմուտ եւ աննշանակ ծրագրերով, եթէ միայն ունէին ծրագրեր:

Յարգելով հանդերձ ներկայ պ. Թեմական (գաւառական կամ տիեզերական) տեսչի անձնաւորութիւնը մենք խորհուրդ կը տայինք նրան խաղաղ հրաժարուել, ձեռները լուանալ տեսչական պաշտօնից եւ մի ուրիշ գործ փնտռել. դա կարող էր շահաւէտ լինել իրան, քանի որ ժողովրդական կրթական գործը շարունակ դէպի յետ կը մղուի իրանով:

Ինչպէս լսում ենք, յարգելի տեսուչը ուզել է ուսումը պարտադիր անել Պարսկաստանում եւ այդ պատառով դիմելով կառավարութեանը եւ երկու ոստիկան վերցնելով, գնացել է Ախտախանա գիւղը եւ ստիպել, որ անպատճառ դպրոց բանան, հակառակ դէպքում տուգանքի կենթարկուին: Դէհ, պարոններ, էլ ինչու գանգատուել, թէ պարսկահայոց մէջ կրթական գործը կաղում է, առաջ չէ գնում. քիչ է մնում Գերմանիան իւր բոլոր կրթական կազմակերպութիւններով եւ պարտաւորական ուսման սիստեմով նսեմանայ պարսկահայոց գործունէութեան առաջ:

Խանզադէ

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

27 հոկտեմբերի 94

„Շաւիղի“ № 39-ում տպուած էր մի յայտարարութիւն Ռաշտի խնայողական ընկերութեան մասին, այդ ուշադրաւ կէտ է, որի համար և կամենում եմ ծանօթացնել „Շաւիղի“ ընթերցողներին, տեղւոյս նորահաստատ ընկերութեանը և նորա նպատակներին։

Խնայողական ընկերութիւնը միայն լոկ տնտեսական նշանակութիւն ունի. դա չէ ղեկավարւում այն սկզբունքներով, որպիսինն է Թէհրանում, կամ այլ քաղաքներում, դա մի շատ սահմանափակ նշանակութիւն ունի, չնայելով որ մարմնացած է մի քանի անհատների համար, „խնայել“ բառիս բուն նշանակութեամբ։

Ռաշտի հայերը, որ զարգացման սանդուխքների ստորոտում են գտնւում, և այդպիսի մի քաղաքում ապրող գործակատարների մէջ, նկատել գաղափարական շարժում, դա իսկապէս ուրախացուցիչ է, թէպէտև այդ գործակատարների կազմած խնայողական ընկերութիւնը շատ նեղ հիմքերի վերայ է գտնւում։

Այժ կրկնում եմ [illegible] է որովհետև [illegible]

տեղւոյս գործակատարների մէջ, ինքնայօրդոր, այդ միտքը յղացել—խնայել իրանց փողերը։

Շատ չէ անցնում պարոնները իրագործում են իրանց միտքը և կազմում են 4 հոգուց բաղկացած մի միութիւն։

Այդ միութիւնը ծաւալ չէ կարողանում գտնել, չէ վերածւում բազմանդամ ընկերութեան, որովհետև ուրիշների մասնակցութիւնը իրանք անյարմար են գտնում, միմիայն ընդունւում է խընայողական դրամներ $9^0/_0$ տոկոս վճարելով։

Ուրեմն սա չի դարձաւ „Ռուշտի խընայողական ընկերութիւն“ երբ ուրիշը իրաւունք չունի բաժնետէր դառնալու (actionnaire) և թէ այս դէպքում իմ կարծիքով, շատ քչերը կը համաձայնուէին վստահանալ անփորձ երիտասարդների մօտ խնայել իրանց փողերը։

Յորդորում ենք այդ պարոններին, յառաջ տանել իրանց սկսած գործը և թէ բարեկամաբար խորհուրդ ենք տալիս, կամ այդ միութիւնը. վերածել անդամակցական ընկերութեան, և կամ վերցնել իրանց վերայից „Ռուշտի խնայողական ընկերութիւն“ անունը, քանի որ իրանց գործերը դորա հակապատկերն են։

—

Այդ պարոնները աւելի լուրջ մտածող հանդիսացան քան թէ, այսպէս ասած մեր ինտելիգէնտները, որոնք ծաղրի առարկայ շինեցին, երբ մենք առաջարկեցինք խնայողական արկղ հաստատել Ռուշտում։

Ա. Յովսէփեանց

Նամակ խմբագրութեան

—

2 նոյեմբերի 94

Արդէն վեց ամիս է, որ Հայկազեան ուսումնարանը կալ է: Անցեալ տարի այս ժամանակ մենք հայ օրիորդներս մեր ուսումնարանումը մեր ուսումը կէս էինք արել: Բայց այս տարի մենք զուրկ ենք մնացել մեր բոլոր ուսումն աւարտութիւնից, նախ Թէհրանում հայ օրիորդները խնդրում են հայ ժողովրդից որ իւրեանց այն փառաւոր ուսումնարանը չը թողնեն փակ մնա եւ մենք հայ օրիորդներս զուրկ մնանք: Այդ ինչ է պատճառը: Միթէ մի հայ ազգութիւն չի կարող մի ուսումնարան պահել, դոնէ հայ օրիորդներին խղճան եւ պահեն որ 10 կամ 11 տարեկան օրիորդները զուրկ չը մնան ուսումից. միթէ այսքան տարիներ բաւական չեղաւ ինչքան օրիորդները զուրկ մնացին ուսումից եւ չը կարողացան իմանալ թէ աշխարք ինչ է եղել: Այդ մեղք չէ. միթէ այդ Աստուած է յայտնել: Ոչ Աստուած միշտ բարին կնդունի եւ ոչ-չարը, միթէ այդ ընդունելի է Աստծուն: Մենք հայ օրիորդներս խնդրում ենք հայ խմբագրութեան: այդքանը որ համոզացնէ հակառակորդներին եւ մի տեսակով Հայկազեան օրիորդաց ուսումնարանը բաց անէ: Այդ է մեր խնդիրքը: Մենք հայ օրիորդներս [illegible] ուսումնարանը, [illegible] է հայ օրի. [illegible] օրիորդներին որ չը մնան կաթոլկաց ուսումնարանում մեր կարծիքը այդպէս է յայտնում որ եթէ մի տասը հոգի գնումեն ութը կը դառնան կաթոլիկ այդ միշտ է իսկ այն երկուսն էլ ով գիտնայ կարողանան մնալ հայ թէ ոչ եթէ հայ ազգութիւնը խիղճ ասած բառը գիտենայ թէ ինչ է կը շարունակէ; իսկ եթէ ոչ այն էլ ձեզ է կապած: Եթէ դուք հայերդ խիղճ ունենաք իսկապէս կը շարունակէք, կը հրդուենք որ եթէ ուզենաք կարողէք շարունակել, եթէ դուք առաջ չէիք ուզում հայ օրիորդները գնային կաթոլկաց վարժարանը կարծեմ հիմա կամենում էք որ գնանք, որ կոյսերը երես առ երես խօսքով այնպէս անեն ինչպէս մարդու զարկեն եւ սպանեն, եթէ զարկեն սպանեն լաւ է քան թէ այդպիսի խօսքեր ասեն: Ուրեմն լաւ է որ հայ օրիորդները գետինը մտնեն քան թէ այն կաթօլիկ կոյսերից խօսքեր լսեն որ մինչեւ հիմա չեն իմացել իւրեանց կարգ եւ կանոնը: Գիտէք թէ ինչ կասեն թէ ձեր հայ ազգութիւնը առաջ կամենում էր որ հայ օրիորդները չը մնան այստեղ հիմա ուր էք եկել ուրեմն գնացէք այս 3 տարին որտեղ կայիք հիմա էլ գնացէք, դուք առաջ մեր հովանաւորութեան տակն էիք իսկ այս երեք տարին հայոց հովանաւորութեան տակ, ինչու բացուելուն ուզում էիք պաշտպանել ձեր հայ ազգութիւնը իսկ հիմա ոչ: Ուրեմն սիրելի հայեր գնացէք եւ ձեր հայութիւնը պաշտպանեցէք որ հայ օրիորդներս մեծ եռանդով խնդրում ենք որ մեզի սեւերես ձեռքներս կապ չը թողնէք ինչպէս կը նմանինք մի քանի խեղճ պանդուխտներ: Կարծեմ որ դուք կը շարունակէք եւ չէք թողնել հայ օրիորդները-ամօթալի խօսքեր լսեն: Եթէ չքացուի այն ժամանակ կը յայտնուի թէ ինչքան դժբաղտ եւ անպաշտպան ենք հայ օրիորդներս: Ուրեմն մենք խնդրում ենք խմբագրութեան որ աւելի կամ պակասներին որովհետեւ իմ խիղճը սրանից աւելի չէ կարողանում յայտնել: Մենք երբոր մեր ուսումնարանի այն փառաւոր ուսումը միտքներս է ընկնում ինչպէս մի խելագար չը գիտենք ձերը ինչպէս է լինում:

Խնդրում ենք խմբագրութիւնից որ այս փոքր խնդիրքը „Շաւղի“ մի փոքր անկիւնում տեղ տայ:

Թագուհի Ս. Վարդանեան

Դավրէժ 17 Հոկ. 94

„Շաւղի“ 34 թւում մի ոմն անյայտ լրատու ուրախութեամբ սրտի հաղորդում է շաբաթաթերթի ընթերցողներին մի ոչ-վարպետութեամբ թխած սուտ լուր, թէ „քաղաքումս սունկի նման աճող, բայց կէս շահու արդիւնք ցոյց չը տուող ընկերութիւններից մէկի Նախագահը—Ս. Միրզոյեանը հրաւիրելով իւր? ընկերութեան անդամներից մէկին հօրեղբօր տունը իբր թէ ժողովի, այնտեղ երկու անգամ ատրճանակ է արձակում նորա վերայ մի քանի ղրան հաշուի համար.... և բարեբախտաբար երիտասարդը ազատւում է“։ Յետոյ դիւական քրքիջով աւելացնում է. „Այս դէպքը ցոյց է տալիս պարզապէս, թէ այդ ընկերութիւնը որ անունով միայն գոյութիւն ունի (?!) որպիսի անդամներից է բաղկացած, որոնց ընտրելի նախագահը վերոյիշեալ Ս. Միրզոյեանն է։ Մի ծիծաղէք, այլ խղճացէք“։

Պատասխանել լրատու պարոնի մի այդպիսի ինքնահնար և յետին նպատակներով հաղորդած լուրին՝ նշանակում է արժանացնել նրան մեծ պատուի և նշանակութիւն տալ նորա գրածներին, որոնց բուն նպատակն է ցոյց տալ հասարակութեանը, թէ՝ իմացէք, որ լրատու պարոնը այնքան ճարպիկ է, որ մինչև անգամ կարողանում է ինքնահնար սուտ լուրերով համ իբր թէ ձգել այս կամ այն ընկերութեան և ո և է մի անձնաւորութեան վարկը ժողովրդի աչքում և համ էլ վրէժ լուծելու համար նորան կասկածելի ցոյց տալու ժողովուրդի աչքում։ Ես անպատասխան կը թողնէի այդ զրպարտիչ լրատու պարոնին, եթէ իմանայի, որ նորա ստոր մեքենայութիւնը չէր դրդել մեր բարեխնամ կառավարութեանը երրորդ անգամ ուշադրութիւն դարձնելու մասնաւորապէս ինձ և „Սէր“ ընկերութեան վերայ իբրև...., և երկրորդ՝ եթէ այդ ցած մտադրութիւնը չէր ունենայ իւր կորստաբեր հետևանքները և կը լինէր տարիներով գործադրուած զրպարտութիւնների վերջինը, բայց որովհետև լրատու պարոնը իւր համախոհներով իւր կեանքի միակ նպատակն է դարձրել երբ և իցէ կորստեան անդունդը ձգելով ինձ՝ քանդել մի հասարակական մարմին, որպիսին է „Սէր“ ընկերութիւնը, ակամայից և խորին զգուանքով պահանջում եմ նորանից որ հրապարակապէս հաստատէ հաղորդած լուրի ճշդութիւնը փաստերով, որից յետոյ կը պատասխանեմ նորան մի առ մի նկարագրելով ժամանակագրական կերպով և կենդանի փաստերով այն դաւադրութիւնները (ի հարկէ առանց անուններ տալով), որոնք գործադրուել են իմ կեանքի դէմ մինչև անգամ սրիկաների միջոցով թէ անցեալներում և թէ հէնց մօտ օրերումս, այն ստոր և զրպարտիչ մտադրութիւնների շարքերը, որոնց շատ և շատ անգամներ ենթարկուել ենք ես, ընկերութիւնը և մանաւանդ ընկերութեան խեղճ ուսուցիչ պ. Գ. Դօլուխանեանցը և ազատուել շնորհիւ Ս. եպիսկոպոս Մխիթարեանցի և Խաչատուր վարդապետի։

Պ. լրատու, մի րոպէ ընդունենք ձեր հաղորդած լուրը իբրև ճշմարտութիւն, բայց ինչ նպատակով էք տուել այդ լուրը հարցնում եմ, ինչ յանցանք ունին այդ գործի մէջ ընկերութեան բոլոր անդամները միթէ նորանք բոլորն էլ Ս. Միրզոյեաններ են, միթէ իմ մասնաւոր կեանքի պատճառով նրանք էլ պէտք է ընկնեն պատասխանատուութեան տակ։ Կատարեալ լրբութիւն չէ այդպիսի միջոցների դիմելը ձեր կողմից և ստորաքարշ մտադրութիւնների դիմել... Ախր մի րոպէ մտածեցէք, որ դուք էլ պատկանում էք մարդկային սեռին....,

ինչն է ստիպել ձեզ այդպիսի անհիմն լուրեր հաղորդելու, միթէ չը գիտէք, որ ներկայ դարը գաղափարի կռուի դար է և գաղափարի դէմ կռւում են միմիայն գաղափարով։

Իբրև վերջին խօսք խորհուրդ եմ տալիս ձեզ այլ ևս չը սրբապղծել մամուլը ձեր թունաւոր գրչով։

Ս. Միրզոյեանց

Նամակ խմբագրութեան

Խոյ 7 Հոկ. 94

Ամէն օր հետաքրքրութեամբ սպասում ենք պարսկա-թիւրքական սահմանագլխում գտնուող Կաբէլիի և իւր ամբողջ շրջակայ գիւղերի կառավարիչ Թաղիր խանի և Մակուի հզօր կառավարիչ Թեմուրխանի մ ջում եղած շփոթութիւններից ու իրարանցումից մի նոր բան լսել, օր չի լինում որ մի երկար քրոնիկ չը պատմուի, թէև կէսը հազիւ ուղիղ։

Թեմուր խանը՝ որ կառավարութեան սիրելի ծառայողներից մէկն է, ցեղական մի ինչ ատելութեամբ (որի սկիզբը կարծւում է լինել իւր եղբօր Խասխ փաշայի քրդերից սպանուելը և իւր գիւղացիներից մի քանիսի կողոպտուելը) տասը հազարից աւելի զօրք հաւաքում է ու դիմում Թաղիր խանի վերայ։ Այդ իմանալով տեղիս կառավարութիւնը, Հէյդէր խան Ամիրին զօրքով ուղարկում է, որ հաշտեցնէ երկուսին, բայց Թեմուր խանը չանսալով նրա խօսքին, մի օր յանկարծ վերայ է տալիս և մեծ կոտորած է անում։ Քրդերից ընկնում են մեծ ու փոքր 150 հոգի և մինչև 3—4 հարիւր կենդանիներ, այրում ու աւերում է նորանց ցորենի շտեմարանները ու գերում Թաղիր խանին։

Թեմուր խանի կողմից ընկնում են միայն 3—4 հոգի, որոնց մէջումն է և մի հայ. (Մակուի բոլոր ազգաբնակութիւնը, հայ և թուրք պարտաւոր են զէնք վերցնել օգնել իրանց խանին պատերազմի ժամանակ)։

Թէև Թաղիր խանը տարւում է Մակու ուսպար գերիներով յետ ուղարկւում կրկին իւր տեղը, բայց նա չկարողանալով տանել իւր աղջկայ վիրաւորուելը հարիւրաւոր որբերի լացն ու կսկիծը, քրդերից մի փոքր խումբ հաւաքելով յարձակւում է իւր հակառակորդի մի գիւղի վերայ, աւարում ցորենի շտեմարանը և գալիս տեղը բողոքում Կառավարութեան, որից հրաման ստանալով տեղիս զօրքը, գնում է Թէմուր խանին պատժելու։

Այս օրերում ամէն կողմից չարագուշակ լուրեր են լսւում։ Թադէոս առաքեալի վանքն կողոպտուել է քրդերից Բուլանխից 200 տուն հայեր եկան գնացին Երևան։ Պատահութիւն ունեցայ հարցնելու թէ ինչու էք գաղթում։—Զգաղթենք ինչ անենք, պատասխանեցին,—Մեր բոլոր ստացուածք խլելուց յետոյ, այժմ մեզ էլ սպանում ու չարչարում են՝ երբ չենք կարողանում իրանց բաւականութիւն տալ և երբ դիմում ենք Կառավարութեանը՝ ասում է. «ինչ անեմ, ուր որ ուզում էք գնացէք»։

Ն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 31-ին ժամանեցին Կովկասից ազգային Հայկազեան վարժարանի դասատուք պ. պ. Վ. Փափազեան և Ալբէսեանց։ Դասախօսութիւնները սկսել են ամսոյս մէկից, վեց դասատուներով, դպրոցի աւանդուելիք առարկաների վերայ աւելացել են անգլիերէն լեզուն և երաժշտութիւնը։

—

Մեզ խնդրում են յայտնելու, որ Հայկազեան ազգ. ուսումնարանի դասերը սկսել են կանոնաւորապէս Կովկասից ուսուցիչները հասած լինելով։ Աշակերտների ընդունելութիւնը կը լինի մինչև Նոյեմբեր 15ը։

—

Ուրախութեամբ և առանց փոփոխութեան, իբրև նմոյշ, հրատարակում ենք Օրիորդ Թագուհի Ս. Վարդանեանցի նամակը։ Այդ նամակը մէկ ապացոյց է թէ Թէհրանում 10—11 տարեկան հայ աղջիկը ինչքան կարևորութիւն է տալիս կրթութեան գործին, թէև, որպէս հաստատ աղբիւրներից լսում ենք, այս շաբաթ բացուելու է օրիորդաց դպրոցը, սակայն, հասարակութիւնը պէտք է որ աւելի լուրջ կերպով վերաբերուի իգական սեռի կրթութեան գործին։

—

Լսում ենք որ, Հ. վարժարանի նախկին տեսուչը վերջերս իւր հրաժարականը ներկայացրել է, Ազգային Հոգաբարձութեան։ Հոգաբարձութիւնը կրկին խնդրել է որ տեսուչը իւր պաշտօնը շարունակէ մինչև Յունվար. մէկ բան, որ մեզ թւում է անբացատրելի և հանելուկ այդ է թէ նախկին տեսուչը միևնոյն ժամանակ Ազգային ուսումնասիրաց ընկերութեան թէ ատենապետն էր և թէ դպրոցի Ֆրանսերէնի դասատուն, նա իւր հրաժարականը տուել էր հոգաբարձութեան՝ երբ հոգաբարձութիւնը և ընկերութիւնը լուծուեց, բոլոր այդ պաշտօններն էլ լուծուեցան, ցանկալի էր իմանալ թէ ինչպէս պատահեց որ նա կրկին մնաց իւր պաշտօնում և պարտաւորուեց կրկին իւր հրաժարականը տալ նորընտիր հոգաբարձութեան......

—

Ամսոյս 4-ին, ուրբաթ օր, այցելեցին Ազգ. Հայկազեան դպրոցը, տեղւոյս Alliance Française-ի ճիւղի նախագահը, քարտուղարը—գանձապետը և պետական դպրոցի նկարչութեան ուսուցչապետը։ Քննեցին Ֆրանսերէնից Ա. և Բ. դասարանները և միւս դասարաններն էլ այցելելով, բաւականին գոհ մեկնեցին։

—

Ամսոյս 5-ին, շաբաթ օրը, մեծ շքով Թէհրան մուտք գործեց անգլիացւոց դեսպանը։

—

Դավրէժից մեզ գրում են հետևեալը։ 23-ին հոկտեմբերի ռուսաց հիւպատոսը հանգուցեալ կայսեր համար հոգեհանգիստ կատարել տուեց Բերդաթաղի եկեղեցում պատարագից յետոյ. ներկայ էին բոլոր հիւպատոսները, Դավրէժում գտնուող եւրոպացիները, պարսից կառավարութեան բոլոր բարձրաստիճան պաշտօնեաները, պաշտօնական հագուստով, ռուսահպատակ բոլոր հայերը և թուրքերը, իրանց թարջիմաններով, Դավրէժի հայ բողոքականաց միսիօնարները միսօնարուհիք։ Եկեղեցին լիքն էր ժողովրդով։ Եկեղեցում մի քանի տեղ, ի նշան սգոյ, ծածկուած էին սև կտորով։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ մի ստուար խումբ սալմաստցիներ մտադիր են բողոքելու Դավրէժի ս. առաջնորդից, Վ. Հայրիկին, նորա նոր կարգադրութեան դէմ՝ ամուսնութեան եւ մկրտութեան հրամանագրերի թանգացնելու առթիւ։ Ամուսնութեան հրամանագիրը այժմս արժէ 20 ղ. 15 ղ. 10 ղռան, իսկ մկրտութիւնը արժէ 3 ղռան. ինչպէս լսում ենք շատերը իրանց երեխաները մկրտել են տալիս մեծ ղալմաղալներից յետոյ, իսկ պսակների համար ընկել են դիմումներ անել օտար միսիօնարների որոնք, ի հարկէ, գրկաբաց կընդունին։

—

Մուժամբարցիք երկար բարակ դիմումներ անելէն յետոյ, իրանց քահանայի առթիւ, որը հիմա նշանակուած է ս. առաջնորդից բերթաթաղում քահանայ մտադիր են դիմելու Թաւրիզի բողոքականաց միսօնարներին, որ մի քարոզիչ ուղարկէ Մուժումբար։

—

Ուշտից մեզ գրում են որ կրթական գործը, մեզանում անորոշ դրութեան մէջ է այս տարի, երիտասարդները բոլորն էլ անտարբեր են. բոլորն էլ հեռացել են գործից, որովհետև տեղւոյս ուսուցիչը իւր անձնական տկարութեան պատճառաւ, չէ ուզում մասնակցել։ Ամօթ Ուշտի երիտասարդներին, որոնք ոչինչ չեն կարողանում անել առանց ուսուցչի. ուրեմն Ուշտի երիտասարդութիւնը նշանակում է ուսուցիչ, իսկ ուսուցիչ ասելով պէտք է հասկանանք Ուշտի երիտասարդութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Եւրոպական լրագրերից քաղում ենք, որ Ճապոնեան յաղթական մեծ քայլերով դիմում է Չինաստանի մայրաքաղաքի Պեքինի վերայ։ Չինաց Կայսրը իւր անձնական և կրօնական հարստութիւններով փախուստ է տուել Մայրաքաղաքից։

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ